

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

03.03.2012թ.

գ. Արամուս

Ի կատարումը ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի հունվարի 30-ի N 11-Ա հրամանով հաստատված վարչական հսկողություն իրականացնելու 2012 թվականի աշխատանքային ծրագրի, ՀՀ Կոտայքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի թիվ 10-Ա կարգադրության և մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 2012 թվականի փետրվարի 28-ի N 27-Ա հրամանի՝ ս. թ. փետրվարի 28-ից մարտի 1-ը ներառյալ Կոտայքի մարզի Արամուսի գյուղապետարանում իրականացվեց վարչական հոկողություն: Վարչական հսկողությունը իրականացվել է ՀՀ փոխվարչապետի 2012 թվականի հունվարի 30-ի N 02-Ն հրամանով հաստատված՝ ՀՀ մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության իրականացման և կադրային գործի վարման, մեթոդական ուղեցույցի համաձայն: Ուսումնասիրությունները իրականացվել են հետևյալ կազմով՝ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ Ս. Հակոբյան (աշխատանքային խմբի ղեկավար), նույն վարչության՝ ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի առաջատար մասնագետ Ռ. Թումոյան, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության՝ ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Կ. Հունանյան, նույն բաժնի առաջատար մասնագետ Ս. Բաղդասարյան, իրավաբանական բաժնի պետ Ա. Հարությունյան, հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Ե. Ավետիսյան, քաղաքաշինության վարչության՝ ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ Ա. Վիրաբյան:

Աշխատանքներին մասնակցել են Արամուս համայնքի ղեկավար Հրայր Նիկողոսյանը, աշխատակազմի քարտուղար Մանե Վարդանյանը:

Վարչական հսկողությունը ընդգրկել է 2009 թվականի ապրիլից մինչև 2012թ. մարտը ընկած ժամանակահատվածը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ավագանու լիազորությունների նկատմամբ

1) Արամուս համայնքի ավագանին ընտրվել է 2008թ. հոկտեմբերի 12-ին և բաղկացած է 8 անդամներից /օրենքով սահմանված թիվը՝ 9/ իր լիազորությունները ստանձնել է 2008թ.-ի նոյեմբերի 11-ին: Ավագանու անդամ՝ Զ. Վարդանյանի լիազորությունները օրենքով սահմանված կարգով վաղաժամկետ դադարեցվել են՝ 20.12.2010թ.-ին /անցել է աշխատանքի համայնքի ղեկավարի աշխատակազմում, որպես համայնքային ծառայող, ՏԻՄ հ. 18./:

2) Արամուս համայնքի ավագանին իր կանոնակարգը ընդունել է 28.11.2008թ. թիվ 1/2 որոշմամբ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Կանոնակարգում /կետ 17-ում/ սահմանված է ավագանու հերթական նիստերի գումարման ժամանակացույց՝ փետրվար, ապրիլ, հունիս, օգոստոս, հոկտեմբեր, դեկտեմբեր ամիսների վերջին ուրբաթ օրերը: Նիստերի գումարման ժամանակացույցը կազմվել է որոշ բացթողումներով, կան նիստեր, որոնց գումարման ժամանակահատվածը երկու ամիսից ավելի է, որը հակասում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երկրորդ պարբերության պահանջին՝ << ... Ավագանու նիստերը անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: ... >>:

3) Համայնքի ավագանին համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը հաստատել է 09.03.2009թ. թիվ 4/3-Ն որոշմամբ:

4) Համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգի մասին ավագանին որոշում չի ընդունել, չի կատարվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջը:

5) Ավագանու՝ 27.12.2009թ. N 66 որոշումով համայնքի ղեկավարի վարձատրության չափ է սահմանվել 180000 դրամ, որը համապատասխանում է օրենքով սահմանված չափին /համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 3500 մարդ, ՏԻՄ հ. 27/, հաջորդ տարիներին համայնքի ղեկավարի վարձատրության չափ չի սահմանվել, այն չի փոփոխվել՝ մնացել է նույնը:

6) Համայնքում գործում է միայն <<Արամուսի մարզամշակույթային կենտրոն>> բյուջետային հիմնարկը, որի տնօրենը պաշտոնի է նշանակվել 2002թ.:

7) Համայնքային նշանակության՝ դեպի Ձորաղբյուր տանող փողոցը, անվանվել է <<Արայի>> խճուղի և սահմանված կարգով ավագանին հաստատել է 29.06.2011թ. թիվ 24 որոշմամբ: Համայնքային նշանակության այլ փողոցների, պողոտաների, հրապարակների, զբոսայգիների, համայնքային ենթակայության կրթական, մշակութային և այլ հիմնարկների ու կազմակերպությունների անվանման և վերանվանման վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

8) Համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկի աշխատակիցների թվաքանակի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 21.12.2009թ. N 67, 20.12.2010թ. N 46, 16.12.2011թ. N 49 որոշումներով: Այստեղ հարկ է նշել, որ 21.12.2009թ. N 67 որոշման հավելված 1-ում, համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակում կա բացթողում՝ համայնքի ղեկավարի հաստիքը և դրույքաչափը նշված չէ, հաջորդ տարիներին կարգավորվել է:

9) Ավագանին 01.04.2010թ. N 13 որոշումով՝ Արամուս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակում կատարել է համապատասխան փոփոխություն, օպերատորի հաստիքը փոխարինել է համայնքային ծառայության 1-ին կարգի մասնագետի հաստիքով և սահմանված կարգով առաջարկությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնին՝ ՀՀ տարածքային կառավարման նախարարությանը՝ Արամուս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում /2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանի հավելված N6-ում/ համապատասխան փոփոխության հաստատման համար, որը հաստատվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 01.06.2010թ. N 75-Ա հրամանով:

Համայնքի ղեկավարի իրականացրած լիազորությունների նկատմամբ

1. Ֆինանսների բնագավառ

Արամուս համայնքում վարչական հսկողություն իրականացվում է 2009թ-ի 2-րդ եռամսյակից: 2009թ-ին համայնքի բյուջեն ավագանու կողմից հաստատվել է 47825.6 հազար դրամ, որը տարվա ընթացքում ենթարկվելով մի շարք փոփոխությունների կազմել է 53025.6 հազար դրամ: Համայնքի բյուջեի փաստացի կատարողականը կազմել է 54359.9 հազար դրամ կամ նախատեսված ծավալի 102.5%: Միայն պլանավորման արդյունքում բարձր կատարողական է արձանագրվել տեղական տուրքերի գծով, ինչը կազմել է 1134.3 հազար դրամ կամ նախատեսված ծավալի 151.2%:

24.06.2009թ-ին <ՄԱՂ Շինանյութ> ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր՝ Արամուսի մարզամշակույթային կենտրոնի մասնակի վերանորոգման աշխատանքների իրականացման նպատակով՝ 990.0 հազար դրամի չափով: Համաձայն պայմանագրի կանխավճար չի նախատեսվել: Աշխատանքների իրականացման ընթացքում կանխավճար տրվել է 26.06.2009թ-ին՝ 500.0 հազար դրամ, իսկ մյուս 375.0 հազար դրամը փոխանցվել է 07.07.2009թ-ին, այն դեպքում, երբ հաշիվ-ապրանքագիրը ներկայացվել է 30.07.2009թ-ին՝ 875.0 հազար դրամ:

2010թ-ի համայնքի տարեկան բյուջեն համայնքի ավագանու կողմից հաստատվել է 14.01.2010թ-ի N 4/Ն որոշմամբ՝ 55812.8 հազար դրամ եկամտային մասով, ինչը տարվա ընթացքում ենթարկվելով մի շարք փոփոխությունների կազմել է 60162.8 հազար դրամ, որի դիմաց փաստացի կատարողականը կազմել է 60623.0 հազար դրամ կամ նախատեսված ծավալի 100.7%:

Համայնքային ենթակայության <Արամուսի մարզամշակույթային կենտրոն>բյուջետային հիմնարկում գործում են մի շարք խմբակներ, որոնցից ստացված գումարները հիմնարկը մուտք է անում համայնքի բյուջե որպես այլ եկամուտ, սակայն համաձայն հիմնարկի կանոնադրության ֆինանսական գործունեության և ֆինանսական միջոցների նպատակային

օգտագործման համար պատասխանատվություն կրում է հիմնարկի ղեկավարը: Այսինքն հիմնարկը պետք ունենա առանձին բանկային հաշվեհամար, իսկ գումարները մուտքագրվեն հենց հիմնարկի հաշվեհամարին:

Կազմակերպության կողմից ստուգմամբ ներառված ժամանակաշրջաններում ձեռք են բերվել տարբեր տեսակի գրասենյակային և շինարարական նյութեր, որի փաստաթղթավորումը կանոնակարգվում է ՀՀ ֆինանսների նախարարի 2002թ-ի N 151-Ն հրամանով:

Համայնքի ավագանու կողմից համայնքի բյուջեի եռամսյակային հաղորդումների և տարեկան հաստատված հաշվետվությունների նկատմամբ տարված հսկողության արդյունքում պարզվեց, որ 2009թ-ի առաջին եռամսյակի բյուջեի կատարման մասին հաղորդումը համայնքի ավագանու կողմից հաստատվել է 30.04.2009թ-ի N 31 որոշմամբ:

2. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

ՀՀ Կոտայքի մարզի Արամուս համայնքի հողերի օգտագործման և գոտիաորման սխեման մշակվել է ՀՀ Կառավարության 2003թ.-ի մայիսի 2-ի 625-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան և հաստատվել է ՀՀ կառավարության 10.03.2011թ-ի 224-Ն որոշմամբ:

1.Ճարտարապետահատակագծային առաջադրանքների առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 29.09.2002թ N 1473 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 5, 2010թ-ին 7 և 2011թ-ին 9 ճարտարապետահատակագծային առաջադրանքներ, որոնք համապատասխանում են ՀՀ կառավարության 29.09.2002թ N 1473 որոշման պահանջներին:

2.Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի, դրանց փորձաքննության համաձայնեցման և հաստատման առկայությունը՝ համաձայն ՀՀ կառավարության 21.12.1998թ. թիվ 812 և քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 96 որոշումների պահանջներին և համապատասխանությունը գործող օրենսդրությանը:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին համաձայնեցվել է 6; 2010թ-ին 7 և 2011թ-ին 9 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր, որոնք համապատասխանում են գործող կարգին:

3.Շինարարության /քանդման / թույլտվության առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 02.02.2002թ. թիվ 91 որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 6; 2010թ-ին 7 և 2011թ-ին 9 շինարարության և 2010թ-ին 2,իսկ 2011թ.-ին 1 շինության քանդման թույլտվություններ որոնց տրման կարգը համապատասխանում է ՀՀ կառավարության 02.02.2002թ N91 որոշման պահանջներին:

4.Ավարտված շինարարության շահագործման փաստագրման առկայությունը և համապատասխանությունը ՀՀ կառավարության 08.05.03թ.թիվ 626- Ն որոշման պահանջներին:

Համայնքի ղեկավարի կողմից 2009թ-ին տրվել է 4 2010թ-ին 1 և 2011թ-ին 3 շինարարության ավարտը փաստագրող ակտեր, որոնցում բացակայում են կատարողական փաստաթղթերը (շինարարության վարման մատյան,ծածկած աշխատանքների ակտերը):

5.Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի և նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության ապահովումը ՀՀ կառավարության 28.10.1998թ.թիվ 660 որոշմամբ:

Համայնքի ղեկավարի կողմից ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկումը և նախագծերի քննարկումը կատարվել է գյուղապետարանի շենքում վահանակների տեսքով:

6.Ինքնակամ շինություններ

Համայնքի ղեկավարի կողմից գործող կարգին համապատասխան 2009,2010 և 2011թթ-ին օրինականացվել են մեկական շինություններ:

7. Կառուցապատման համար կայացված որոշման համապատասխանությունը քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, իսկ վերջինիս բացակայության կամ փոփոխության դեպքում ՀՀ կառավարության 30.07.1998թ N 478 և 479 որոշումների պահանջներին:

3. Հողօգտագործման բնագավառ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 41; 42; 43-րդ հոդվածների և «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջներով, ստուգվեց Արամուս համայնքի ղեկավարի գործունեությունը ՀՀ հողային օրենսդրության պահանջների կատարման ուղղությամբ:

Ստուգումից պարզվեց, որ համաձայն համայնքի հողային հաշվեկշռի համայնքում առկա է 515,26 հա համայնքային սեփականության հողատարածք, որից 111,65 հա վարելահող, 0,2հա այգի ,136, 02 հա արոտ, 204,91 հա այլ գյուղ.հող, 42,45 հա բնակավայրի, 0,,58 հա էներգետիկայի, կապի, 9,06 հա հատուկ պահպանվող 10,39 հա ջրային ֆոնդի հողեր: Վերը նշվածից վարձակալությամբ հատկացվել է 45,69 հա, որից 34,05 հա գյուղ.նշանակության, 11,64 հա արտադրական /ընդերքօգտագործման/ կնքված էր թվով 50 պայմանագիր, վարձավճարի ապառքներ չկան:

Ստուգման ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողերի 22 աճուրդ վաճառք, որի արդյունքում օտարվել է 7,58 հա համայնքային սեփականության հողամաս, որից 7,48 հա գյուղ.նշանակության, 0,1 հա բնակավայրի նշանակության, աճուրդ-վաճառքներից համայնքի բյուջե է մուտքագրվել 2,14 մլն.դրամ:

Ստուգման ժամանակահատվածում համայնքում կատարվել է համայնքային սեփականության հողամասերի ուղղակի վաճառքի 11 դեպք, որի արդյունքում օտարվել է 2,94 հա համայնքային սեփականության հողամաս 3,79 մլն. դրամ արժեքով: Համայնքում կայացած աճուրդ-վաճառքները տեղի են ունեցել ՀՀ Հողային օրենսդրության պահանջներին համապատասխան, սակայն համայնքային սեփականության հողամասերի ուղղակի վաճառքները կատարվել են առանց համապատասխան հողաշինարարական գործ կազմելու, որի կապակցությամբ համայնքի ղեկավարին՝ տրվեց ցուցում, այսուհետև համայնքային սեփականության հողամասերը ուղղակի վաճառելու դեպքում կազմել համապատասխան հողաշինարարական գործ ՀՀ կառավարության 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ սահմանված կարգի 7-րդ կետի պահանջներին համապատասխան:

2011թ. մարտի 10-ի թիվ 244 ՀՀ կառավարության որոշման համաձայն հաստատվել է Արամուս համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման, համաձայն որի համայնքային սեփականության 58,67 հա գյուղ.նշանակության հողերից 37,75 հա փոխադրվել է բնակարանային հողերի կատեգորիա, 15,89 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման, 3,82 հա էներգետիկայի, կապի, տրանսպորտի, 1,21 հա հատուկ պահպանվող տարածքներ:

Ստուգման ժամանակահատվածում գոտիավորման սխեմայի համաձայն կատարվել է հետևյալ գործառույթները՝ 0,142 հա բնակավայրի հասարակական կառուցապատման հողամասը օրենքի պահանջներին համապատասխան օտարվել է աճուրդ վաճառքի եղանակով:

Քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողերից ըստ գործող կարգի /այսինքն տվյալ պահին գործող կադաստրային արժեքների տարբերությունը մուծելուց հետո/ փոփոխվել է նպատակային նշանակությունը 0, 15 հա-ի վրա, որի արդյունքում համայնքի բյուջեն համարվել է 1,75 մլն. դրամով:

-Համայնքի ղեկավարին տրվեց ցուցում, կանոնակարգել համայնքի վարչական տարածքում գտնվող ընդերքօգտագործող սուբյեկտների հողօգտագործումը, ՀՀ հողային օրենսդրության պահանջներին համապատասխան:

4. Տրանսպորտի բնագավառ.

- Համայնքային ենթակայության ճանապարհների, ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների, կամուրջների ու ինժեներական այլ կառույցների պահպանման և շահագործման կազմակերպման

աշխատանքներից՝ կատարվել է միայն համայնքային ենթակայության ճանապարհների նորոգման և բարեկարգման աշխատանքներ:

-Համայնքում համայնքային ենթակայության տրանսպորտային հիմնարկներ և կազմակերպություններ չեն գործում:

5. Առևտրի և ծառայությունների քննազատ.

-Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատվել են ավագանու 25.12.2009թ. թիվ 75 որոշմամբ:

- Առևտրի օբյեկտներում ոգելից խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվությունները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 19.07.2007թ-ի N 843-Ն որոշման 3-րդ և 6-րդ կետերի պահանջներին:

- Բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվություններ չեն տրամադրվել, բացօթյա վաճառք համայնքի տարածքում չի իրականացվում:

-Համայնքի տարածքում ժամը 24.00-ից հետո աշխատող օբյեկտներ չկան:

-Թանկարժեք մետաղների առուվաճառք համայնքի տարածքում չի իրականացվում:

6. Այլ քննազատներ

1) 2009թ. գումարվել է ավագանու 20 նիստ, որից 14-ը՝ արտահերթ, 2010թ. 14 նիստ, որից 8-ը՝ արտահերթ, 2011թ.՝ 13 նիստ, որից 7-ը՝ արտահերթ, 2012թ./մինչև ստուգումը/ 2 նիստ, որից 1-ը՝ արտահերթ:

-Ավագանու հերթական նիստերը հրավիրվել և գումարվել են կանոնակարգով /ընդ. 28.11.2008թ. թիվ 1/2, հավելվածի կ. 17/ սահմանված օրերին: Նիստերի օրակարգերում ընդգրկված որոշման նախագծերը և համապատասխան փաստաթղթերը նիստն սկսվելուց առաջ սահմանված կարգով տրամադրվել են ավագանու անդամներին:

- Ավագանու նիստերին ներկայացած և քվեարկությանը մասնակցած ավագանու անդամների գրանցումներ կատարվել են սահմանված կարգով, հատուկ մատյանում:

- Ավագանու որոշումները ներկայացվում են անհատական ձևաթղթերի վրա, որտեղ կան որոշակի թերություններ կապված օրակարգի հաստատման հետ, չի կատարվել նաև <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը՝ ակտում կիրառվող ամսաթվերում տարեթիվը և ամսաթիվը գրվում են թվերով, իսկ ամիսը՝ տառերով: Հարկ է նշել նաև, որ ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 6-ի նիստի N 39 արձանագրային որոշմամբ հաստատված՝ ՏԻՄ-երի կողմից ընդունվող փաստաթղթերի նախագծերի մշակման մեթոդական ուղեցույցը գյուղապետարանին տրամադրելուց հետո՝ որոշումները /ձևաթղթերի վրա/ համապատասխանեցվել են մեթոդական ուղեցույցի 6-րդ կետի պահանջներին: /Մեթոդական ուղեցույցը մարզպետի 01.10.2011թ. N 01/15.1/3987-11 գրությամբ ուղարկվել է գյուղապետարան:/

- Ստուգվող ժամանակահատվածի, ավագանու նիստերի որոշումները մարզպետարան են առաքվել հիմնականում օրենքով սահմանված ժամկետում /բացառությամբ 5 դեպքի՝ ուշացրել են 3-5 օր /: <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետ: /

- Ավագանու նիստերի մասին և օրակարգերի հրապարակումները իրականացվում են 4 տեղ, 1-ը՝ համայնքապետարանում: /<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենք, 121-րդ հոդված: Համայնքի բնակչության թիվը կազմում է մոտ 3500 մարդ:/

- Ավագանու որոշումների հաշվառման մատյաններ վարվում են 2010 թվականից, կան բացթողումներ՝ լրացված չէ նորմատիվ որոշումները պետական փորձագիտական եզրակացություն տալու մասին պայմանները /տրամադրվող որոշումների առանձին հաշվառման մատյան չի վարվում:/ <<ՀՀ կառավարության 11 հուլիսի 2002թ. թիվ 1146-Ն որոշում /հավելված թիվ 2/:

2) Համայնքի ղեկավարը համայնքի 2009-2012թթ. քառամյա զարգացման ծրագիրը ավագանու հաստատման է ներկայացրել 09.03.2009թ.:

3) Համայնքի ղեկավարը 16.10.2008թ. թիվ 29 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը (առանձնացված ստորաբաժանում չունի):

-Համայնքի տարածքում գործում է <<Արամուսի մարզամշակույթային կենտրոն>> բյուջետային հիմնարկը /վկայական N Բ 004817, պետական գրանցամատյանում հաշվառման

համարը՝ 42.0145, գրանցման ամսաթիվը՝ 22.05.2000թ./, հիմնարկի կանոնադրությունը հաստատված է համայնքի ղեկավարի կողմից, սակայն նշված չէ կանոնադրության հաստատման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և որոշման համարը, կանոնադրությունը նաև իրավաբանական անձի պետական գրանցում չունի:

4) Աշխատակազմում բացակայում է քաղաքացիական պաշտպանության պլանը:

5) Կազմակերպվել է համայնքի բնակիչների հաշվառում. 2009թ.՝ 3732 մարդ, 2010թ.՝ 3735 մարդ, 2011թ.՝ 3487 մարդ, 2012թ.՝ 3465 մարդ:

6) Համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը սահմանված են, գրանցումների մատյանը վարվում է սահմանված կարգով:

-Ավագանու կողմից քաղաքացիների ընդունելություններ չեն կատարվել:

7)Համայնքի զինապարտների գրանցամատյանները վարվում են /նաև էլեկտրոնային տարբերակով/:

8)Համայնքը մանկապարտեզ չունի:

-Համայնքում գործում է <<Արամուսի մարզամշակույթային կենտրոն>> բյուջետային հիմնարկը, գործում են դաշնամուրի, ժող գործիքների բաժիններ և պարի խմբակ, որտեղ սովորում են ընդհանուր թվով 54 աշակերտներ /տեղեկատվությունը՝ տնօրենի/: Շենքային պայմանները անբավարար են, կարիք ունի վերանորոգման: Աշխատակիցների թիվը 17:

- Համայնքի գրադարանը տեղավորված է մշակույթի տանը, գործում է, առկա է 8900 կտոր գիրք, գրադարանից օգտվում են տարեկան մոտ 420 ընթերցողներ: Գրադարանի պայմանները անբավարար են, տարածքը չի ջեռուցվում:

7. Իրավական հսկողություն

Ոստիմաստիքով ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից 2009 թ. տրվել է 96, 2010 թ.՝ 112, 2011 թ.՝ 103 կարգադրություններ, համապատասխանաբար 38, 54, 107 որոշումներ, աշխատակազմի քարտուղարի կողմից 2009 թ. տրվել են 5, 2010 թ.՝ 12, 2011 թ.՝ 11 հրամաններ:

Համայնքի ղեկավարի և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերում արձանագրվել են մի շարք խախտումներ, թերություններ և բացթողումներ:

Համայնքի ղեկավարի 2009 թ. N 24 կարգադրության մեջ չի պահպանվել օրենքի հոդվածի «մաս», «կետ» հարաբերակցությունը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, համաձայն որի «օրենքի հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների: Հոդվածների մասերը կարող են բաժանվել միայն համարակալված կետերի, կետերը՝ միայն համարակալված ենթակետերի», նույնը կրկնվել է 2009 թ.՝ N 28, 2011 թ.՝ NN 2, 82 կարգադրություններում, 2009 թ. N 22, 2011 թ.՝ NN 23, 31, 34, 44, 91, 100 որոշումներում:

07.08.2009 թ. N 51 կարգադրությունը չունի նորմատիվ հիմնավորում, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Անհատական կամ ներքին իրավական ակտի նախաբանում կամ բովանդակության մեջ պետք է նշվի, թե որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի համաձայն կամ ի կատարումն է ընդունվում»: Նույնը կրկնվել է N 34 կարգադրության մեջ:

08.11.2010 թ. N 41 որոշման մեջ ճիշտ չի գրառվել նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության պահանջը, համաձայն որի «Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության օրենք» բառերը», նույնը կրկնվել է 2011 թ. NN 4/1, 27 կարգադրություններում:

Համայնքի ղեկավարի 12.12.2011 թ. N 96 կարգադրությամբ հղում է կատարվել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածին՝ «բարեխիղճ աշխատանքի համար» թվով 11 աշխատակիցների տրվել է «լրացուցիչ վարձատրություն», որը տվյալ հոդվածով նախատեսված չէ, անհրաժեշտ է պարզապես տրամադրել խրախուսանք:

Համայնքի ղեկավարի 2009 թ. N 34 կարգադրությամբ փոփոխություն է կատարվել համայնքի ավագանու որոշման մեջ, խախտվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, համաձայն որի «Իրավական այլ ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարում են միայն իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը: Իրավաստեղծ մարմինն իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ կարող է կատարել միայն նույն տեսակի իրավական ակտով»: Այսինքն՝ ավագանու որոշման մեջ համայնքի ղեկավարի որոշմամբ փոփոխություն չի կարող կատարվել, այն պետք է կատարվի միայն ավագանու որոշմամբ: Նույնը կրկնվել է համայնքի ղեկավարի NN 36, 37, 43, 44, 53 կարգադրություններում:

2009 թվականից համայնքում վարվում է իրավական ակտերի հաշվառման մատյաններ, որտեղ սահմանված կարգով հաշվառված են համայնքի ղեկավարի կարգադրությունները և որոշումները, աշխատակազմի քարտուղարի հրամանները:

Դիմումներ և գրություններ. Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվում է դիմումների մուտքի, գրությունների մուտքի և ելքի մատյաններ: 2009 թվականին մուտք է եղել 60, 2010 թվականին՝ 126, 2011 թվականին՝ 160 դիմումներ, համապատասխանաբար մուտք է եղել 63, 125, 127 և ելք է եղել 201, 184, 198 գրություններ: Բոլոր մուտք եղած դիմումներն ու գրությունները, ինչպես նաև ելք եղած գրությունները գրանցված են դիմումների մուտքի, գրությունների մուտքի և ելքի մատյաններում, որոնք սահմանված կարգով էջակալված, թելակարված և կնքված են:

Ուսումնասիրվել է համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օտարման և վարձակալության տրամադրման հարցերը, բոլոր դեպքերում պարտադիր կարգով առկա է համայնքի ավագանու որոշումը՝ գույքը օտարելման կամ օգտագործման տրամադրման թույլտվության մասին, իսկ օտարումը կամ վարձակալության տրամադրումը իրականացվել է ավագանու կողմից՝ սահմանված գնով:

Համայնքի աշխատակազմի կողմից թվով 2 հայցադիմում է ներկայացվել Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ հողի վարձակալության թվով 7 պայմանագիր չեղյալ համարելու և հոգուտ Արամուս համայնքի «Մեհիքերին» ՍՊԸ-ից բռնագանձելու 125,105 և 617,160 հազար ՀՀ դրամ, որպես չվճարված վարձավճար: Ընդհանուր իրավասության դատարանի վճիռներով՝ հոգուտ Արամուս համայնքի բռնագանձվել է ընդհանուր գումարով 742,265 հազար ՀՀ դրամ և չեղյալ է համարվել 13,45 հա հողատարածքի համար կնքված թվով 7 վարձակալության պայմանագրերը:

Համայնքում ստեղծված խնամակալության և հոգեբարձության հանձնաժողովի կողմից իրականացվում է խնամակալության և հոգեբարձության մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների իրականացումը: 2009 թ. խնամակալության և հոգեբարձության հարց չի քննարկվել, 2010 և 2011 թվականներին հանձնաժողովի կողմից գումարվել է 4-ական նիստեր, որոնցում քննարկվել է 2 հարց խնամակալ նշանակելու, 3 հարց երեխայի պահանջի մասին, 1 հարց երեխայի ազգանվան հետ կապված, 1 հարց երեխայի տեսակցության և 1 հարց երեխայի խնամքի և դաստիարակության հետ կապված:

Համայնքի ղեկավարի իրավական ակտերով աջակցություն է ցուցաբերվել համայնքի սակավապահովված ընտանիքներին: Համայնքի ավագանու որոշմամբ յուրաքանչյուր նորածին երեխայի համար սահմանվել է 10.000 դրամ աջակցություն, իսկ 20.000 դրամի չափով աջակցություն ստանում են մահացած բնակչի հարազատները: Համայնքի կողմից վճարվում է նաև սակավապահով ընտանիքների երեխաների ուսման վարձերը և այլն:

ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՄ

1. Համայնքի ղեկավարը 16.10.2008թ. թիվ 29 որոշմամբ հաստատել է աշխատակազմի կանոնադրությունը (առանձնացված ստորաբաժանում չունի), համապատասխան փոփոխությունները կատարել է 26.09.2011թ. թիվ 74 որոշմամբ, որտեղ նշված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր փոփոխությունները՝ կապված համայնքային ծառայության, պաշտպանության բնագավառի, խնամակալության և հոգաբարձության հետ: Կանոնադրությունը իրավաբանական անձի պետական գրանցում չունի, այն կարգավորվում է ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով /հոդ. 55,56/:

2. Համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի իրավական ակտերի հաշվառման մատյանները վարվում են, ՀՀ կառավարության սահմանված կարգով՝ 2010 թվականից: /<<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 89-րդ հոդված, 1-ին մաս/:

3. Համայնքի ավագանու և աշխատակազմի քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերը համապատասխանում են իրավական ակտերի հաշվառման մատյանների գրառումների հետ:

4. Համայնքի ղեկավարի աշխատակազմի հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերը սահմանված կարգով հաստատվել են ավագանու 21.12.2009թ. N 67, 20.12.2010թ. N 46, 16.12.2011թ. N 49 որոշումներով: Համայնքային ծառայության պաշտոնների մասով հաստիքացուցակը համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանով հաստատված՝ Արամուս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկին /N 6 հավելված/: Համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափերը համապատասխանում են «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի ու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին:

5. Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատվել են համայնքի ղեկավարի 07.01.2007թ. թիվ 1 որոշումով, հավելվածներ՝ 1-4: ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 15-ի N 03-Ա հրամանով կատարվել է փոփոխություն 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանի հավելված 6-ում՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի առաջատար պաշտոնը /ծած. 2.1-1/ ուժը կորցրած է ճանաչվել /հրամանի կետ 1-ի 2-րդ ենթակետ/, նշված պաշտոնը շարադրվել է նոր խմբագրությամբ /հր. կ.1, 1.2 ենթակետ/ գլխավոր պաշտոնների 2-րդ ենթախումբ, /ծած. 1.2-1/: Գլխավոր պաշտոնի անձնագիրը համայնքի ղեկավարը հաստատել է 26.04.2009թ. թիվ 09 որոշմամբ:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 01.06.2010թ. N 75-Ա հրամանով կատարվել է համապատասխան փոփոխություն՝ 2006 թվականի նոյեմբերի 20-ի N 203-Ա հրամանի N 6 հավելվածում. անվանացանկի համայնքային ծառայության կրտսեր պաշտոնների խմբի 2-րդ ենթախումբը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր 1-ին կետով /ավելացվել է՝ 3.2-1 ծածկագրի, 1-ին կարգի մասնագետի հաստիքը/ աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները դարձել են հինգ: Նշված պաշտոնի անձնագիրը, սահմանված կարգով, համայնքի ղեկավարը հաստատել է 16.06.2010թ. N 17 որոշումով:

Համայնքի ղեկավարի 26.04.2009թ. թիվ 09, 01.04.2010թ. թիվ 10 որոշումներով գլխավոր և առաջատար /1.2-1, 2.3-1, 2.3-2 ծածկագրերի/ պաշտոնների անձնագրերում կատարվել են փոփոխություններ օրենսդրության պահանջներին համապատասխան, որտեղ նկատվել են թերություններ և բացթողումներ, որոնց կարգավորման համար ներկայացվել են համապատասխան պարզաբանումներ:

6. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերի վարումը հիմնականում համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 7-ի N 20-Ն հրամանով սահմանված՝ համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին:

7. Ավագանու 18.03.2009թ. թիվ 23 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկված ավագանու անդամների քանակային և անհատական կազմերը /5 անդամ/ /<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքում փոփոխությունները ուժի մեջ են մտել՝ 06.12.2008թ./:

- Սահմանված կարգին համապատասխան մրցութային և ատեստավորման հանձնաժողովի նախագահը /համայնքի ղեկավարը/ 26.03.2009թ. թիվ 12 որոշմամբ հաստատել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը, հանձնաժողովների կազմի փոփոխություններ են կատարվել 26.08.2009թ. թիվ 23 որոշումով: Համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգային նիստ՝ հանձնաժողովի նախագահի տեղակալի ընտրության, կայացել է 08.04.2009թ., /նիստ գումարվել է նաև 07.09.2009թ., փոխվել է հանձնաժողովի նախագահի տեղակալը/: Հանձնաժողովի նիստերի արձանագրություններում հիմնականում պահպանվել են սահմանված կարգի պահանջները:

8. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերի հիման վրա համայնքի ղեկավարը 22.02.2007թ. թիվ 2 որոշումով հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը /հավելված 1, 2/, համայնքային ծառայության օրենսդրության փոփոխությունների հետ կապված, սահմանված կարգով, նշված աշխատակարգերում համապատասխան փոփոխություններ կատարել է 26.03.2009թ. թիվ 8 որոշումով /հավելված 1, 2/:

9. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից հաստատված համայնքների ղեկավարների աշխատակազմերի աշխատանքային կարգապահական ներքին օրինակելի կանոնակարգի հիման վրա համայնքի ղեկավարը 05.05.2009թ. թիվ 14 որոշմամբ հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը: Կապված աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների հետ՝ կանոնակարգում համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարվել են 31.08.2010թ. թիվ 32 որոշմամբ: Կանոնակարգը պատշաճ իրազեկվել է աշխատակազմի աշխատակիցներին:

10. Համայնքի ղեկավարի աշխատակազմում վարվում են համայնքային ծառայության մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գրանցամատյանները: Մատյանները համարակալված, թելակարված և կնքված են:

11. Աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները զբաղեցնողների, ինչպես նաև մրցույթի արդյունքներով նշանակվածների, կրթությունը, ստաժը և այլ տվյալները համապատասխանում են համայնքային ծառայության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության և տվյալ պաշտոնի անձնագրի պահանջներին:

12. Աշխատակազմի համայնքային ծառայողների գրանցամատյանում (Ձև N 1) առկա են որոշ տեխնիկական թերություններ և անհամապատասխանություններ՝ վերջին կիսամյակային հաշվետվությունների ամսաթվերում: Գրանցամատյանային տվյալները հիմնականում համապատասխանում են մարզպետարան ներկայացված տվյալներին:

13. Համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների փաթեթների ուսումնասիրությունից պարզվեց, որ մրցույթները և ատեստավորումները հիմնականում անցկացվել են սահմանված կարգերին համապատասխան:

14. Համայնքի զինապարտների հաշվառման գրանցամատյանները վարվում են /իսպելս նան էլեկտրոնային տարբերակներով/: Գրանցամատյաններում առկա են որոշ անհամապատասխանություններ, տարվում են աշխատանքներ այն ամբողջությամբ համապատասխանեցնելու սահմանված ձևերին: /ՏԻՄ հ36/:


ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ

ՂԵԿԱՎԱՐ՝



Ս. ՀԱԿՈՒԲՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ՝




Ռ. ԹՈՒՄՈՅԱՆ



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Կ. ՀՈՒՆԱՆՅԱՆ



Ս. ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ



Ե. ԱՎԵՏԻՍՅԱՆ



Ա. ՎԻՐԱԲՅԱՆ

ԱՐԱՄՈՒՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Խնդրաբար աղջիկ. պաշտոն առնել
 իմ օրըստի բազապարտները և
 ապագայում կ'ընեն
 /անուն, ազգանուն/

06 03 2012 թ.